**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-4/2020**
**24.12.2015թ. կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-4 պետական գնման պայմանագրի**

**ք. Երևան** **« 24 » « 02 » 2020թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյան, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԱՌՄԱՇ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Աֆոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 24.12.2015թ. կնքված N**ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-4** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 փոփոխել և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2020 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 16,273,000 (տասնվեց միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում:
Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը,տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները»:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Գնման ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

1.3 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 2-ի:

1.4 Պայմանագրի 2.4 կետ կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«2.4.4 Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ընթացքում ապահովել կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին դեպքի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից»:

1.5 Պայմանագրի 7-րդ «Այլ պայմաններ» բաժինը լրացնել նոր 7.10 և 7.11 կետերով և շարադրել դրանք հետևյալ խմբագրությամբ.

«7.10 Կատարողը պարտավոր է ապահովել ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների, վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով սահմանված պահանջների:

7.11 Կատարողը ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի վերականգնման համար կարող է փոխհատուցում պահանջել վնաս պատճառող ֆիզիկական կամ իրավաբանական անձից (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունից)»:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2020թ հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում են մինչև 2020թ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «ՎԱՌՄԱՇ» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, | ՀՀ, ք. Վանաձոր, Գործարանային 15 |
| ՀՀ կենտրոնական գանձապետարան | «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011012136 | ՀՀ 1930007407070100 |
| ՀՎՀՀ 02815457 | ՀՎՀՀ 06912201 |
| գլխավոր քարտուղարին փոխարինող | տնօրեն |
| Հ. Բատիկյան | Կ. Աֆոյան |
| ___________________ /ստորագրություն/ | ___________________ /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

24.02.2020թ.

Թիվ ԳԱԿ-ԾՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-4/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
**(2020 թ. իրականացվելիք)**

(ՀՀ դրամ)

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | 2020թ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | ՀՀ Լոռու մարզի Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի Ձորագետ գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքներ | 4,068,250 | 4,068,250 | 4,068,250 | 4,068,250 | **16,273,000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011012136
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՎԱՌՄԱՇ» ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Գործարանային 15
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1930007407070100
ՀՎՀՀ 06912201
տնօրեն
Կ. Աֆոյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

24.02.2020թ.

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**(2020 թ. իրականացվելիք)**

(ՀՀ դրամ)

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնման ենթակա աշխատանքների անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | ՀՀ Լոռու մարզի Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի Ձորագետ գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքներ | - | 2,712,167 | 2,712,167 | 6,780,417 | 6,780,417 | 6,780,417 | 10,848,667 | 10,848,667 | 10,848,667 | 16,273,000 | 16,273,000 | 16,273,000 | **16,273,000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011012136
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՎԱՌՄԱՇ» ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Գործարանային 15
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1930007407070100
ՀՎՀՀ 06912201
տնօրեն
Կ. Աֆոյան

/ստորագրություն/
Կ.Տ.